ՁԵ N4

Տեղեկանք
2016 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի 9 ամիսների իրականացման արդյունքների

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Հավելված 1, կետ 35	«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը 29.06.2016 թվականի թիվ 01/16.2/2307-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.09.2016թ. նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ:	
	Հավելված 1, կետ 36	«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության կողմից 29.07.2016թ. հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N29 արձանագրային որոշումը:	
	Հավելված 1, կետ 37	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 30.08.2016թ. №01/16.1/3574-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված 1, կետ 38	«Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը 09.09.2016թ. №01/16.1/3756-16 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	

Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	**<u>Հավելված N 2</u>** **Կետ20.**	**Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովում** - խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում	Մշակվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ	

			կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:Նախագծերը 07.06.2016թ. №01/16.1/1884-16 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Սարապատ, Արփի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ համայնքներում համայնքների միավորման միջոցով ձևավորվել են համայնքային փնջեր: Իրականացվել են վերլուծություններ՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Սարապատ, Արփի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ խոշորացված համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում): Սեպտեմբերի 18-ին ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Գորայք, Տեղ, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Կողբ, իսկ հոկտեմբերի 2-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ, Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ, Զառիթափ համայնքներում կայացել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Գորայք, Տեղ, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Կողբ համայնքներում կայացել են ավագանիների առաջին նիստերը, որոնց ընթացքում ընդունվել են ավագանու կանոնակարգերը, համայնքում հանրային բաց լսումների կամ քննարկումների կազմակերպման և անցկացման, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգերը:	

		-այցելություններ պիլոտային ծրագրերում ներառված համայնքներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ խոշորացման գործընթացի վերաբերյալ իրազեկող ու պարզաբանող բնույթի հանդիպումներ անցկացնելու նպատակով - պիլոտային ծրագրերում ներառված համայնքներում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծման աշխատանքների իրականացում:	Համայնքների բնակիչներին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվում է տեղեկատվություն՝ համայնքների խոշորացման նպատակների, առավելությունների, ռիսկերի վերաբերյալ: Վեր են հանվել և գույքագրվել այդ համայնքների բոլոր հիմնախնդիրները՝ ըստ առաջնահերթության, հետագա ծրագրերում ընդգրկելու նպատակով: Մինչև ՀՀ Ազգային Ժողովի քննարկումները շահագրգիռ համայնքների ՏԻՄ-երի մասնակցությամբ կազմակերպվել և անց են կացվել խորհրդարանական լսումներ: Առանձին աշխատանքային խմբեր զբաղվում են խոշորացվող համայնքներում ընդհանուր տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքներով, ինչի նպատակն է՝ բնակիչների համար ստեղծել առավել նպաստավոր պայմաններ՝ տեղում ծառայություններից օգտվելու համար:	